ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 փետրվարի 2026 թվականի N 47-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՐՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի Արամայիս Յեղուբի Նասիբյանի կողմից լիազորված անձ Հարություն Հովհաննեսի Գալստյանի /մուտք 09.01.2026թ. թիվ 16/ դիմումը՝ Լորուտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 27.06.1991թ. թիվ 3 որոշումից քաղվածքները, այն հանգամանքը, որ հողամասերն ընդգրկված չեն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ՝

Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Արամայիս Յեղուբի Նասիբյանի /ծնված՝ 10.05.1940թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Լորուտ, 9-րդ փողոց 33 հասցեում 06-045-0075-0001 ծածկագրում գտնվող 0.24 հա և հատկացվածից ավել 0.00003 հա մակերեսով տնամերձ հողամասի և 83.39 քմ մակերեսով բնակելի տան,3.11 քմ մակերեսով անասնագոմի նկատմամբ:
2.Ճանաչել Արամայիս Յեղուբի Նասիբյանի /ծնված՝ 10.05.1940թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Լորուտ,06-045-0119-0043 ծածկագրով 0.29հա և հատկացվածից ավել 0.080277 մակերեսով խոտհարքի նկատմամբ:
3. Ճանաչել Արամայիս Յեղուբի Նասիբյանի /ծնված՝ 10.05.1940թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Լորուտ,06-045-0149-0013 ծածկագրով 0.77հա և հատկացվածից ավել 0.00395 մակերեսով խոտհարքի նկատմամբ:
4. Ճանաչել Արամայիս Յեղուբի Նասիբյանի /ծնված՝ 10.05.1940թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Լորուտ,06-045-0126-0007 ծածկագրով 0.38 հա և հատկացվածից ավել 0.00294 մակերեսով վարելահողի նկատմամբ:
5.Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
6. Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
7. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:
8.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 20.01.2026թ. թիվ 37-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 փետրվարի 2026 թվականի N 48-Ա

ՆՈՐԻԿ ՋԱՆԻԲԵԿԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԻՆՋ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետով և հաշվի առնելով Նորիկ Ջանիբեկի Մկրտումյանի դիմումը՝
Ո ր ո շ ու մ ե մ.

1.Նորիկ Ջանիբեկի Մկրտումյանին 2026 թվականի փետրվարի 4-ից նշանակել Թումանյան համայնքի Քարինջ բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնում:
2.Աշխատավարձը՝ ըստ Թումանյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 86-Ա որոշման հավելվածով հաստատված պաշտոնային դրույքաչափի,աշխատաժամանակի ռեժիմը՝ ինգօրյա աշխատանքային շաբաթ՝ երկու հանգստյան օրով, ամենամյա արձակուրդի տեսակը՝ նվազագույն և լրացուցիչ (20+4 աշխատանքային օր տևողությամբ):
3.Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 փետրվարի 2026 թվականի N 49-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին› Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ըստ ժառանգության իրավունքի վկայագիրը տրված 11.09.2025թ. գրանցված է սեղանամատյանում N 4825,գործ թիվ 314, հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը և Լարիսա Ռաֆիկի Իսրայելյանի /մուտք 16.09.2025թ.թիվ 636/ դիմումը՝

Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Լարիսա Ռաֆիկի Իսրայելյանի /ծնված՝ 12/10/1953թ/ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, ք. Թումանյան 18-րդ փողոց 1-ին փակուղի 3 հասցեում գտնվող 06-004-0056-0001 ծածկագրից առանձնացված 0.11 հա մակերեսով տնամերձ հողամասի և 44.2 քմ մակերեսով բնակելի տան,17.0 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբի հարթակի,20.9 քմ մակերեսով բնակելի տան նկուղի և 26.3 քմ մակերեսով անասնագոմի նկատմամբ:
2. Հատկացվածից ավել զբաղեցրած 0.03 հա մակերեսով տնամերձ հողամասը «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին›› Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն ճանաչել Լարիսա Ռաֆիկի Իսրայելյանի /ծնված՝ 12/10/1953թ./ սեփականությունը:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
4. Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

03 ՓԵՏՐՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 փետրվարի 2026 թվականի N 50-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի Գոհար Տիրայրի /մուտք 09.01.2026թ. թիվ 16/ դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը,տրված 14.01.2026թ. գրանցված է սեղանամատյանում N 160,161 գործ թիվ 11, 29.10.1993 թվականին կազմված սեփականության վկայագիրը,19/05/1997 թվականին կնքված թիվ 856 սեղանամատյանի համարով առուվաճառքի պայմանագիրը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագիծըայն հանգամանքը, որ հողամասերն ընդգրկված չեն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ՝

Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Գոհար Տիրայրի Գալստյանի/ծնված 13/12/1967թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք Թումանյան քաղաք 7-րդ փողոց 9 հասցեում 06-004-0018-0026 կադաստրային ծածկագրում գտնվող 77.30 քմ մակերեսով բնակելի տան, 89.40 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբի, 100.0 քմ մակերեսով բնակելի տան կիսանկուղի, 2.70 քմ մակերեսով ջրավազանի, 25.20 քմ մակերեսով անասնաշենքի, 24.80 քմ մակերեսով անասնաշենքի բաց պատշգամբի և 0.11756 հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ:
2.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
3. Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-
րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

03 ՓԵՏՐՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 փետրվարի 2026 թվականի N 51-Ա

<<ՀՈՎԱՆ>> ՍՊԸ-ԻՆ 01.01.2026Թ.-31.12.2026Թ.ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Թումանյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 28-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>>թիվ 84-Ն որոշման պահանջով և հիմք ընդունելով <<ՀՈՎԱՆ>> ՍՊԸ-ի տնօրեն Աննա Հովհաննիսյանի հայտը՝

Որոշում եմ.

1.<<ՀՈՎԱՆ>> ՍՊԸ-ի տնօրեն Աննա Հովհաննիսյանին տալ 01.01.2026թ.-31.12.2026թ. ժամանակահատվածում Թումանյան համայնքի, գ.Դսեղ,4 հողամաս հասցեում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն:

2.Աշխատակազմի առաջին կարգի մասնագետին՝ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3 . Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<ՀՈՎԱՆ>> ՍՊԸ-ի իրավական ակտն ընդունելու մասին իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

03 ՓԵՏՐՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 փետրվարի 2026 թվականի N 52-Ա

<<ՀՈՎԱՆ>> ՍՊԸ-ԻՆ 01.01.2026Թ.-31.12.2026Թ.ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2025թ. նոյեմբերի 28-ի և 2022թ. փետրվարի 18-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 84-Ն և <<Թումանյան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին>> թիվ 17-Ն որոշումները և <<ՀՈՎԱՆ>> ՍՊԸ-ի տնօրեն Աննա Հովհաննիսյանի հայտը՝

Որոշում եմ.

1.<<ՀՈՎԱՆ>> ՍՊԸ-ի տնօրեն Աննա Հովհաննիսյանին տալ 01.01.2026թ.-31.12.2026թ.ժամանակահատվածում, Թումանյան համայնքի, գ.Դսեղ, 4 հողամաս հասցեում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություն:

2.Աշխատակազմի առաջին կարգի մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3 . Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<ՀՈՎԱՆ>> ՍՊԸ-ի իրավական ակտն ընդունելու մասին իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

03 ՓԵՏՐՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան